Լրամշակված Նախագիծ

Կ-119-14.12.2021-ՏՀ-011 *Երկրորդ ընթերցում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 440-րդ հոդվածում լրացնել հետևյալ խմբագրությամբ 5-րդ և 5.1-ին մասեր.

«5. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ համալիր հարկային ստուգման արդյունքում ընդունված ստուգման ակտերի բողոքարկման դիմում-բողոքների, որոնց քննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով, ինչպես նաև Օրենսգրքի 442-րդ հոդվածի 4.2-րդ մասով նախատեսված դեպքերի:

5.1. Բանավոր ընթացակարգով դիմում-բողոքների քննությունը կարող է իրականացվել նաև տեսաձայնային կապի միջոցով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 441-րդ հոդվածը՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը՝ այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից երկու ամսվա ընթացքում:»,

2) 5-րդ մասում «ծանուցագրի ձևը,» բառերից հետո լրացնել «հանձնաժողովի անդամների կողմից ներկայացվող քվեաթերթիկի ձևը,» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 442-րդ հոդվածը՝

1) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

2) 4-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բանավոր ընթացակարգով քննության ենթակա հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքը հանձնաժողովի կողմից քննարկման ընդունելու դեպքում դիմում-բողոք բերած անձը նախապես ծանուցվում է համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին:»,

3) լրացնել հետևյալ խմբագրությամբ 4.1-ին և 4.2-րդ մասեր.

«4.1. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքի բանավոր քննությունն իրականացվում է բողոքարկման հանձնաժողովի նիստերի միջոցով, իսկ գրավոր քննությունն իրականացվում է էլեկտրոնային ընդհանուր փաստաթղթաշրջանառության միջոցով՝ գրավոր քվեարկություն կազմակերպելու եղանակով:

4.2. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը որոշում է դիմում-բողոքի քննությունն իրականացնել բանավոր ընթացակարգով և դիմում-բողոք բերած անձը նախապես ծանուցվում է համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին, եթե՝

1) գրավոր քննության ընթացքում պարզվում է, որ առկա են գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ հանգամանքներ, որոնք կարող են պարզաբանվել միայն դիմում-բողոք բերած անձի կողմից,

2) դիմում-բողոք բերած անձի կողմից դիմումով ներկայացվել են քննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու հիմնավորումներ, որոնք ընդունվել են

հանձնաժողովի կողմից՝ բանավոր ընթացակարգով ավելի արդյունավետ քննություն իրականացնելու հիմքով:»,

4) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 443-րդ հոդվածը՝

1) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Որոշումները կայացվում են քվեարկությամբ՝ պարզ մեծամասնության ձևով: Բանավոր ընթացակարգով քննության արդյունքում որոշումներն ընդունվում են նիստի ընթացքում բաց քվեարկությամբ, իսկ գրավոր ընթացակարգով քննության արդյունքում՝ քննության օրը գրավոր քվեարկությամբ:»,

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի կայացրած որոշումները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ: Որոշումներն ուժի մեջ են մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից: Հանձնաժողովը որոշման ընդունման մասին դիմումատուին իրազեկում է որոշման ընդունումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի՝ հարկ վճարողի անձնական էջում որոշումը տեղադրելու եղանակով: Հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում որոշման տեղադրումը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Հանձնաժողովը որոշման ընդունման մասին որպես հարկ վճարող չհաշվառված ֆիզիկական անձանց իրազեկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:»,

3) 4-րդ մասից հանել «տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով՝ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կամ» բառերը:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերի: Սույն օրենքի դրույթները կիրառվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկային մարմին մուտքագրված դիմում-բողոքների քննության նկատմամբ:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող Օրենսգրքի 440-րդ հոդվածի 5.1-ին մասն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու եղանակով որոշումների իրազեկման մասով դրույթները ուժի մեջ են մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը հանձնաժողովը որոշման ընդունման մասին դիմումատուին իրազեկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

Նախագիծ

Կ-119-14.12.2021-ՏՀ-011/1 *Երկրորդ ընթերցում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 440-րդ հոդվածում լրացնել հետևյալ խմբագրությամբ 5-րդ և 5.1-ին մասեր.

«5. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ համալիր հարկային ստուգման արդյունքում ընդունված ստուգման ակտերի բողոքարկման դիմում-բողոքների, որոնց քննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով, ինչպես նաև Օրենսգրքի 442-րդ հոդվածի 4.2-րդ մասով նախատեսված դեպքերի:

5.1. Բանավոր ընթացակարգով դիմում-բողոքների քննությունը կարող է իրականացվել նաև տեսաձայնային կապի միջոցով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 441-րդ հոդվածը՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ հարկային ծառայողի

գործողությունները կամ անգործությունը՝ այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից երկու ամսվա ընթացքում:»,

2) 5-րդ մասում «ծանուցագրի ձևը,» բառերից հետո լրացնել «հանձնաժողովի անդամների կողմից ներկայացվող քվեաթերթիկի ձևը,» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 442-րդ հոդվածը՝

1) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

2) 4-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բանավոր ընթացակարգով քննության ենթակա հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքը հանձնաժողովի կողմից քննարկման ընդունելու դեպքում դիմում-բողոք բերած անձը նախապես ծանուցվում է համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին:»,

3) լրացնել հետևյալ խմբագրությամբ 4.1-ին և 4.2-րդ մասեր.

«4.1. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքի բանավոր քննությունն իրականացվում է բողոքարկման հանձնաժողովի նիստերի միջոցով, իսկ գրավոր քննությունն իրականացվում է էլեկտրոնային ընդհանուր փաստաթղթաշրջանառության միջոցով՝ գրավոր քվեարկություն կազմակերպելու եղանակով:

4.2. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը որոշում է դիմում-բողոքի քննությունն իրականացնել բանավոր ընթացակարգով և դիմում-բողոք բերած անձը նախապես ծանուցվում է համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին, եթե՝

1~~ա~~) գրավոր քննության ընթացքում պարզվում է, որ առկա են գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ հանգամանքներ, որոնք կարող են պարզաբանվել միայն դիմում-բողոք բերած անձի կողմից,

2բ) դիմում-բողոք բերած անձի կողմից դիմումով ներկայացվել են քննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու հիմնավորումներ, որոնք ընդունվել են հանձնաժողովի կողմից՝ բանավոր ընթացակարգով ավելի արդյունավետ քննություն իրականացնելու հիմքով:»,

4) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 443-րդ հոդվածը՝

1) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Որոշումները կայացվում են քվեարկությամբ՝ պարզ մեծամասնության ձևով: Բանավոր ընթացակարգով քննության արդյունքում որոշումներն ընդունվում են նիստի ընթացքում բաց քվեարկությամբ, իսկ գրավոր ընթացակարգով քննության արդյունքում՝ քննության օրը գրավոր քվեարկությամբ:»,

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի կայացրած որոշումները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ: Որոշումներն ուժի մեջ են մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից: Հանձնաժողովը որոշման ընդունման մասին դիմումատուին իրազեկում է որոշման ընդունումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի՝ հարկ վճարողի անձնական էջում որոշումը տեղադրելու եղանակով: Հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում որոշման տեղադրումը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Հանձնաժողովը որոշման ընդունման մասին որպես հարկ վճարող չհաշվառված ֆիզիկական անձանց իրազեկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:»,

3) 4-րդ մասից հանել «տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով՝ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կամ» բառերը:

Հոդված 5. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերի: Սույն օրենքի դրույթները կիրառվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկային մարմին մուտքագրված դիմում-բողոքների քննության նկատմամբ:~~օրենքի 1-ին հոդվածով լրացվող Օրենսգրքի 440-րդ հոդվածի 5.1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:~~

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող Օրենսգրքի 440-րդ հոդվածի 5.1-ին մասն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու եղանակով որոշումների իրազեկման մասով դրույթներըն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը հանձնաժողովը որոշման ընդունման մասին դիմումատուին իրազեկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

~~Սույն օրենքի դրույթները կիրառվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկային մարմին մուտքագրված դիմում-բողոքների քննության նկատմամբ:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-119-14.12.2021-ՏՀ-011/1) ԵՎ «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-119[1]-14.12.2021-ՏՀ-011/1)
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հերթականությունը, այն է՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: (...)»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով լրացվող 4.2-րդ մասի կետերը առաջարկում ենք շարադրել արաբական թվանշաններով և տեքստից բաժանել փակագծերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: (...) »:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի վերնագիր**	«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի՝ «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» վերնագրից առաջարկում ենք հանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով լրացվող ա) և բ) կետերը առաջարկում ենք շարադրել արաբական թվանշաններով և տեքստից բաժանել փակագծերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «Մաքսային» բառից առաջ անհրաժեշտ է ամրագրել չակերտ կետադրական նշանը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: (...) »:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության **հարկային** օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին	1. Հանձնաժողովի որոշումների վերաբերյալ որպես հարկ վճարող չհաշվառված ֆիզիկական անձանց ծանուցման կապակցությամբ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության **հարկային** օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «**Մաքսային** ծառայության	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մասի 2-րդ կետ, 5-րդ հոդվածի 1-ին մաս, «**Մաքսային** ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, 2-րդ հոդվածի 1-ին մաս	մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսել, որ հանձնաժողովը որոշման ընդունման մասին որպես հարկ վճարող չհաշվառված ֆիզիկական անձանց իրազեկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով: 2. «Հայաստանի Հանրապետության **հարկային** օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 443-րդ հոդվածի 3-րդ մասով և «**Մաքսային** ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 1-ին հոդվածի 9-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 37-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանվում է, որ հանձնաժողովը որոշման ընդունման մասին դիմումատուին իրազեկում է որոշման ընդունումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի՝ հարկ վճարողի անձնական էջում որոշումը տեղադրելու եղանակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հաշվի առնելով, որ նշված եղանակով դիմումատուին իրազեկելը հնարավոր է համապատասխան էլեկտրոնային համակարգի ներդրմամբ, իսկ նշված ծրագրային աշխատանքների ավարտը նախատեսվում է 2022 թվականի հոկտեմբերի 1-ին, ուստի առաջարկում ենք նախագծերով նախատեսել ՀՀ հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի 3-րդ և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 16-րդ մասերը 2022 թվականի **հոկտեմբերի 1-ից** ուժի մեջ մտնելու ժամկետ: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝ **1.** խմբագրել «Հայաստանի Հանրապետության **հարկային** օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ և «**Մաքսային** ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածների 1-ին և 2-րդ մասերը, **2.** «Հայաստանի Հանրապետության **հարկային** օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածում լրացնել նոր 3-րդ և 4-րդ մասեր՝ հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հարկ վճարողի		

			անձնական էջում տեղադրելու եղանակով որոշումների իրազեկման մասով դրույթները ուժի մեջ են մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից: 4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը հանձնաժողովը որոշման ընդունման մասին դիմումատուին իրազեկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:», **3.** «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում լրացնել նոր 3-րդ և 4-րդ մասեր՝ հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու եղանակով որոշումների իրազեկման մասով դրույթները ուժի մեջ են մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից: 4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը հանձնաժողովը որոշման ընդունման մասին դիմումատուին իրազեկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:»:		